ԵՐԵՎԱՆԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

2017
ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սիրելի համաքաղաքացիներ,

Երևանի քաղաքապետարանն ամփոփում է աշխատանքային տարին արդեն ավանդական դարձած տարեկան հաշվետվությունների թողարկմամբ: Լիահույս եմ, որ դուք կթերթեք հաշվետվության էջերը և կծանոթանաք անցած տարվա ընթացքում Ձեր վարչական շրջանում կատարված աշխատանքներին: Ուրախությամբ եմ արձանագրում, որ Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում մեծածավալ աշխատանքներ են իրականացվել, և տարեվերջին կարող ենք վստահ ասել, որ ձեռքբերումների շարքը ոգևորիչ է: Պետք է նշեմ, որ այդ գործում իրենց զգալի լուման հավասարապես ներդրել են ինչպես մեր բնակիչները, այնպես էլ վարչական շրջանների ղեկավարները:

Վստահ եմ, որ առկա որակական փոփոխությունները՝ բարեկարգված բակային տարածքները, կառուցված խաղահրապարակները, ավելացած կանաչապատ տարածքները, բարեկարգ ու լուսավոր մայթերն ու փողոցները իրենց անմիջական ազդեցությունն են ունենալու Երևանի յուրաքանչյուր բնակչի կյանքի որակի և ընդհանուր քաղաքային միջավայրի դրական փոփոխության տեսանկյունից:

Վստահ եմ նաև, որ այն տեսանելի արդյունքը, որ արձանագրել ենք հարմարավետ քաղաքային միջավայր ստանալու գործում, լինելու է յուրաքանչյուրիս հոգատար վերաբերմունքի ու հոգածության առարկան, ինչն էլ թույլ է տալու իրականացնել նոր ծրագրեր՝ մեր մայրաքաղաքի և նրա վարչական շրջանների զարգացումը դեպի երկարաժամկետ հեռանկար ուղղորդելու նպատակով:

Տարոն Մարգարյան
Երևանի քաղաքապետ

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի հարգելի՛ բնակիչներ,

2017 թվականը լի էր հետաքրքիր և բազմազան ծրագրերով ու ձեռքբերումներով: Մեր վարչական շրջանի ողջ աշխատակազմը շնորհակալությամբ է գիտակցում այն իրողությունը, որ այս տարվա աշխատանքների կեսից ավելին հաջողությամբ չէր պսակվի, եթե չլիներ ձեր պատրաստակամությունը թե՛ առաջարկություններով ու դիտողություններով, թե՛ գործուն մասնակցությամբ աջակցելու մեր վարչական շրջանի տարբեր խնդիրների լուծմանը: Համատեղ ջանքերով մենք այսօր ունենք զգալի ձեռքբերումներ, ինչը սակայն չի նշանակում, որ պիտի բավարարվենք եղած արդյունքներով: Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանը դեպի 2018 թվական է գնում ընթացիկ գործերը հաջողությամբ պսակելու և նոր ու արդյունավետ ծրագրեր իրականացնելու անթաքույց ձգտմամբ՝ վստահ լինելով, որ ունի յուրաքանչյուր բնակչի աջակցությունը:

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավար
Արտակ Ալեքսանյան

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

2017 թ. Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում իրականացվել են ճանապարհաշինության, եզրաքարերի փոխարինման, սալիկապատման, թեքահարթակների կառուցման ու վերանորոգման և այլ տիպի աշխատանքներ:

- Բակային տարածքների ասֆալտապատում՝ շուրջ **25000** քմ
- Փողոցների ընթացիկ վերանորոգում՝ **51000** քմ
- Եզրաքարերի վերանորոգում՝ **260** քմ
- Վերանորոգվել է Երևանի Հ/Ա մուտք «Շինարար Արծիվ» Իսակովի պողոտայի հենապատը

Վերանորոգվել , վերակառուցվել են միջբակային անցուղիների աստիճաններ՝

- Անդրանիկի փ. հ. 46 շենքի դիմացի անցուղու աստիճաններ
- Բաբաջանյան փ. հ. 5 շենքից դեպի հ. 212. տանող անցուղու աստիճաններ
- Անդրանիկի փ. հ. 119 շենքի դիմացի աստիճաններ
- Արարատյան 1-ին զանգ. հ. 6 շենքից դեպի 8/1 շենք տանող անցուղու աստիճաններ
- Բաբաջանյան փ. հ. 15 շենքի դիմացի աստիճաններ

- Նկարազարդվել են բարեկարգված բակային տարածքներին կից հենապատեր՝ **741** քմ
- Գագարինի և Մուշ թաղամասերում իրականացվել է կոյուղագծերի անցկացում՝ **850** գմ
- Ամառանոցային 2-րդ տարածքում իրականացվել են 200 գծմ խմելու ջրի ջրագծի անցկացման աշխատանքներ:

Վերանորոգվել են վարչական շրջանի 34 բակային տարածքներ և այգիներ.

- Շերամի փ. հ. 53, 63-65, 103, 105-109 շենքեր
- Անդրանիկի փ. հ. 55, 31, 109, 117, 116-118, 130 շենքեր
- Հ/Ա Բ2թաղ. հ. 135-137, Ճառագայթային Բ շենքեր
- Օհանովի փ. հ. 8-18, 28 շենքեր
- Ռաֆֆու փ. հ. 25, 69 շենքեր
- Սեբաստիա փ. հ. 14, 23ա, 25, 141/1-141/2 շենքեր
- Սվաճյան փ. հ. 38, 46 շենքեր
- Իսակովի պող. հ. 50/3 շենք
- Տիչինայի փ. հ. 34 շենք
- Լենինգրադյան փ. հ. 31/1-31/8, 23/11-23/13 շենքեր
- Կուրղինյան նրբ. հ. 2 շենքի բակերում
- Ախպարաշեն թաղամասում
- Մալաթիա պուրակում
- Ջատիկյանի անվան, Յու. Բախշյանի անվան, Մայրության, Սիրո հավատի և Երիտասարդական այգիներում գտնվող անսարք, վնասված նստարաններ, աղբամաններ, մանկական խաղային և մարզական սարքեր, պլաստմասե խաղեր, զրուցատաղավարներ, խաղադաշտերի մետաղական և փայտե ցանկապատեր, ֆուտբոլի դաշտի արհեստական խոտածածկույթ և դարպասներ:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ

Բնակարանային ֆոնդի պահպանման ուղղությամբ 2017 թ. կատարվել են մուտքերի բարեկարգման, վթարային պատշգամբների ամրացման ու վերանորոգման և բնակֆոնդի բարելավմանն ուղղված այլ աշխատանքներ:

Վերանորոգվել է՝

- **49** շենքի **934** քմ թեք տանիք,
- **258** շենքի **13251** քմ հարթ տանիք,
- **80** շենքի **120** շքամուտք,
- **19** պատշգամբ՝ **19** բնակարաններում:



Վերանորոգված շքամուտքեր



ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

2017 թ. Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում իրականացվել են բակային տարածքների բարեկարգման, խաղահրապարակների կառուցման, մարզագույքով համալրելու և այլ տիպի աշխատանքներ:

Բարեկարգվել են 4 բակային տարածքներ՝

- Ռաֆֆու փ. հ. 91, 93 շենքերի բակ
- Բաբաջանյան փ. հ. 5, 7, 9 շենքերի բակ
- Լենինգրադյան փ. հ. 31/2 և 31/8 շենքերի բակ
- Անդրանիկի փ. հ. 108 շենքի բակ



Շահագործման հանձնված բակային տարածքներ

2015	6
2016	4
2017	4

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ

2017 թ. բնակչության խոցելի հատվածի համար շարունակել են իրականացվել սոցիալական ծրագրեր:

- «Հաղթանակի օրը»՝ մայիսի 9-ին կազմակերպվել է միջոցառում և ճաշկերույթ Հայրենական Մեծ պատերազմի վետերանների և նրանց հավասարեցված անձանց համար:
- «Գիտելիքի միջազգային օրվա»՝ սեպտեմբերի 1-ի առթիվ **400** ընտանիքների երեխաների տրամադրվել են պայուսակներ գրենական պիտույքներով:
- «Տարեցների միջազգային օրվա»՝ հոկտեմբերի 1-ի կապակցությամբ Երևանի թիվ 1 տուն-ինտերնատի **50** տարեցների տրամադրվել են նվերներ, դրամական աջակցություն և կազմակերպվել է ճաշկերույթ:
- «Հաշմանդամների միջազգային օրվա»՝ դեկտեմբերի 3-ի կապակցությամբ **100** հաշմանդամի տրամադրվել են նվերներ:
- «Ամանորի և Սուրբ ծնունդի» կապակցությամբ **2000** անապահով ընտանիքների և **5300** երեխաների տրամադրվել են սննդային փաթեթներ:
- Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների նորոգման նպատակով Ալեքսանյանների ընտանիքը անապահով ընտանիքների հատկացրել է 10000 քմ իզոգամ:

- Հունիսի 19-ից օգոստոսի 15-ը վարչական շրջանից Հանքավանի «Արագած» մանկական առողջարանային ճամբար են մեկնել զոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների, միակողմանի ծնողազուրկ, բազմազավակ, սոցիալապես անապահով ընտանիքների 140 երեխա:

- «Էրեբունի-Երևան-2799» տոնակատարության շրջանակներում վարչական շրջանի **287** ընտանիքների, նվիրաբերվել է կենցաղային տեխնիկա:

- Արցախի կառավարության կողմից, որպես երախտագիտություն վարչական շրջանի **420** արցախյան պատերազմի զոհվածների, զինհաշմանդամների և մասնակիցների ընտանիքների տրամադրվել է պարենային աջակցություն:

- Կազմակերպվել է վարչական շրջանից ՀՀ և ԼՂՀ սահմանամերձ գոտիներում ծառայող երևանաբնակ ժամկետային զինծառայողների **379** ծնողների այցելությունը զորամասեր:

Համագործակցության շրջանակներում իրականացվել են տարբեր սոցիալական ծրագրեր հետևյալ հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ՝ «Մեզ բացակա չդնեք» ՀԲԿ, «Երևանի մանկավարժ վետերանների ակումբ» ՀԿ, «Խուլերի միավորում» ՀԿ, «Վահան» ՀԿ, Կույրերի միավորման, Երկրապահ կամավորականների միության, «Հանս Քրիստիան Քոֆոետ», «Առաքելություն Հայաստան»:

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

2017 թ. կատարվել են նախադպրոցական հաստատությունների վերանորոգման, գույքային համալրման և այլ աշխատանքներ:

- «Մի կտոր ջերմություն» խորագրի շրջանակներում կրթության բաժնի աշխատակիցները և մանկապարտեզների տնօրենները այցելել են Երևանի հ.1 տուն-ինտերնատ, տարեցների համար կազմակերպվել է միջոցառում և հյուրասիրություն:
- Հունիսին վարչական շրջանի մանկապարտեզների ավարտական խմբերի **1550** երեխայի տրվել է դպրոցական պայուսակ:
- Վերանորոգվել են հ. 105 և հ. 162 դպրոցների դահլիճները:
- Բոլոր մանկապարտեզներում իրականացվել է գույքի արդիականացում՝ եռահարկ մահճակալ՝ **196** հատ, երկհարկանի մահճակալ՝ **244** հատ, մանկական զգեստապահարան՝ **107** հատ, մանկական սեղան (3-6 տարեկանների համար)՝ **146** հատ, մանկական աթոռ (3-6 տարեկանների համար)՝ **612** հատ:
- Վերանորոգվել է հ. 97 մանկապարտեզի հարթ տանիքը՝ **1200** քմ:
- Հիմնանորոգվել է հ. 91 մանկապարտեզը:

Ապահովվել է 4481 երեխայի անվճար նախադպրոցական ուսուցում:

2017 թ. Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում աշխույժ է եղել մշակութային կյանքը:

- Կազմակերպվել են մշակութային միջոցառումներ՝ նվիրված Հայոց բանակի 26-ամյակին, Տյառնընդառաջին, Բուն Բարեկենդանին, Զորավար Անդրանիկի ծննդյան 152-ամյակին, Կանանց միջազգային տոնին, Մայրության և գեղեցկության տոնին, Մայիսյան Եռահաղթանակներին, Վերջին զանգին, Երեխաների պաշտպանության միջազգային օրվան, Վարդավառին, Առաջին զանգին, Անհայտ կորածների միջազգային օրվան, ՀՀ Անկախության 26-ամյակին, Ուսուցչի, գրադարանավարի օրվան, «Էրեբունի-Երևան 2799» -ին, Ամանորին:
- Վարչական շրջանի վարչական շենքում անցկացվել է երգի, պարի մրցույթ-փառատոն: Մրցույթին մասնակցել են հանրակրթական դպրոցների սաները: Մասնակից երեխաները վարչական շրջանի ղեկավարի կողմից արժանացել են պատվոգրերի և նվերների: «Չինարի» այգում «Դիսնեյ» մշակույթի կենտրոնի սաների մասնակցությամբ կազմակերպվել է «Իմ գույների աշխարհում» խորագիրը կրող նկարչության ցուցահանդես-փառատոն:
- Երևանում երեխաների ամառային հանգիստը հետաքրքիր և բովանդակալից դարձնելու նպատակով վարչական շրջանի **20** բակում կազմակերպվել է միջոցառում հրավիրված դերասանների մասնակցությամբ: Շրջանի ղեկավարի կողմից երեխաներին տրվել են նվերներ և քաղցրավենիք:
- ՀՀ Անկախության 26-ամյակի կապակցությամբ սեպտեմբերի 21-ին «Չինարի» այգում կազմակերպվել է համերգային ծրագիր՝ «70-ականների հայկական ջազը» խորագրով:

Ապահովվել է **835** երեխայի արտադպրոցական ուսուցումը:

ՍՊՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

2017 թ. աշխույժ է եղել վարչական շրջանի սպորտային կյանքը, վարչական շրջանի մարզիկներն ու թիմերը մրցանակային առաջատար տեղեր են նվաճել տարբեր նշանակության մրցաշարերում:

- ՀՀ Անկախության 26-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների 26-րդ մարզական խաղեր (թիմային հաշվարկով 1-ին տեղ)
- «Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք» բակային փառատոն (թիմային հաշվարկով 1-ին տեղ)
- ԱՊՀ երկրների միջազգային փառատոն՝ Սանկտ Պետերբուրգ (բասկետբոլ, 3-րդ տեղ)
- Վարչական շրջանի շախմատի օլիմպիադա
- Ազգային ժողովի գավաթի խաղեր
- Վարչական շրջանի ղեկավարի գավաթի բասկետբոլի մրցաշար (1-ին տեղ)
- Եվրոպայի բասկետբոլի աղջիկների առաջնություն՝ Մալթա, արծաթե մեդալներ (Ինգա Մանուչարյանը՝ առաջնության լավագույն ռմբարկու)
- Հունահռոմեական ոճի ըմբիշ Մաքսիմ Մանուկյան՝ աշխարհի չեմպիոն (Փարիզ)
- Վարչական շրջանի բասկետբոլի վետերանների մասնակցությունը ԱՊՀ երկրների միջազգային մրցաշարում՝ քաղաք Կիսլովոդսկ
- Ջորակոչային, նախազորակոչային սպորտային խաղեր
- ՀՀ Անկախության 26-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների 26-րդ մարզական խաղեր հանրապետական փուլ (քաղաք Դիլիջան, բասկետբոլ, սեղանի թենիս 1-ին տեղ)
- Երևան քաղաքի ֆուտբոլի առաջնություն՝ վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի աշխատակիցների միջև



2017 թ. Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում զգալի աշխատանք է կատարվել կանաչապատման ուղղությամբ:



- Կանաչ գոտիներում տեղադրվել են ոռոգման ցանցի խողովակներ՝ **2150** գծմ
- Վերանորոգվել է **550** գծմ ոռոգման ցանցի խողովակաշար
- Տնկվել է **7400** ծառ և **222750** ծաղիկ:

ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ», «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ», «ԵՐԵՎԱՆ ԳԱԶ» ՓԲԸ-ՆԵՐԻ ՀԵՏ

2017 թ. զգալի աշխատանք է կատարվել ջրագծերի, կոյուղագծերի, գազիֆիկացման և էլեկտրաէներգիայի մատակարարման համակարգի նորոգման ուղղությամբ:

- Մուշ թաղամասի կոյուղագծի անցկացման համար «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ն տրամադրել է **22** հատ դիտահոր:
- Անդրանիկի հ. **113** շենքի դիմացի ընդհանուր կոյուղագծի վերանորոգում՝ **16** գծմ:
- Ամառանոցային 2-րդ տարածքում անցկացվել է **200** գծմ ջրագիծ:
- «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից բարելավման ներդրումային ծրագրով իրականացվել է 1080 գծմ հոսանքագծերի փոխարինում՝ 4 հասցեներում:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑ

2017 թ. վարչական շրջանում շարունակվել են արտաքին լուսավորության ցանցի արդիականացման և ընդլայնման աշխատանքները:

- Անցկացվել է 16690 գծմ լուսավորության նոր ցանց՝ 455 լուսակետով:

2017 թ. վարչական շրջանն ակտիվ աշխատանք է իրականացրել միջազգային համագործակցությունն ամրապնդելու ուղղությամբ:

- Համագործակցության ծրագրի շրջանակներում վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցները այցելել են Լեռնային Ղարաբաղի Քաշաթաղի շրջան, հանդիպում ունեցել Քաշաթաղի վարչակազմի հետ: Այնուհետև պատվիրակությունը այցելել է Ստեփանակերտ, սահմանամերձ զորամասեր, հանդիպում ունեցել Ստեփանակերտի փոխքաղաքապետի, սպայական անձնակազմի և զինվորների հետ:
- Երևանի և Սանկտ Պետերբուրգի քաղաքապետների նախաձեռնությամբ ստեղծված համագործակցության ծրագրի շրջանակում վարչական շրջանի ղեկավարի գլխավորած պատվիրակությունը 2017թ. հունիսի 20-22–ը ներկա է գտնվել Սանկտ Պետերբուրգի Մոսկովյան շրջանի կազմավորման 98-րդ տարեդարձին նվիրված տոնակատարությանը: Հանդիպումների ընթացքում քննարկվել են մշակութային ոլորտին առնչվող, ինչպես նաև հետագա համագործակցության ընդլայնման վերաբերյալ հարցեր:
- ՀՀ Սփյուռքի նախարարության կողմից կազմակերպվող «Արի տուն» ծրագրի շրջանակներում վարչական շրջանում հյուրընկալվել է սփյուռքից ժամանած 12 երեխա (Ռուսաստանից, ԱՄՆ-ից, Թուրքիայից, Ֆրանսիայից):

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ

2017 թ. վարչական շրջանն ակտիվ աշխատանք է իրականացրել միջազգային համագործակցությունն ամրապնդելու ուղղությամբ:

- Վարչական շրջանի հ. 92 մանկապարտեզ են այցելել ՄԱԿ-ի Հայաստանի գրասենյակի հաշմանդամ երեխաների իրավունքների պաշտպանության ներկայացուցիչները: Վերջիններս ծանոթացել են մանկապարտեզում ներդրված մոդելին և աշխատակիցների աշխատանքային գործունեությանը:
- Վարչական շրջանի ղեկավարի հրավերով վարչական շրջանում հյուրընկալվել է «Էրեբունի-Երևան 2799» տոնի կապակցությամբ Երևան այցելած Ֆրանսիայի Դրագինյան քաղաքի քաղաքապետի առաջին տեղակալ Պրիմոզելլի Քրիստինի գլխավորած պատվիրակությունը:
- «Էրեբունի-Երևան 2799» տոնի կապակցությամբ Երևանում կազմակերպված միջոցառումներին մասնակցելու նպատակով Ամմանից ժամանած հյուրերը մասնակցել են «Էրեբունի-Երևան 2799»-ամյակին նվիրված միջոցառումներին:
- Հ. հ 11 և 181 դպրոցների սաներ Մերի Մուսինյանը և Քրիստինե Ենգոյանը «Նոր անուններ» խմբի կազմում համերգային ծրագրերով հանդես են եկել Վաշինգտոնում, Կորեայում, Չինաստանում:

Մենք
հաշվետու ենք
մեր համաքաղաքացիներին

ԹԵԺ ԳԻԾ՝
+(374 11) 518-588
malatia_sebastia@yerevan.am